Հաստատված է
Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի գիտական խորհրդի
2016 թվականի հունիսի 22-ի նիստում,
արձանագրություն N 9,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
_____ Կ.Լ.Աթոյան
«22» _____06_____ 2016 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ, ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգի մշակման համար հիմք են ընդունվել «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի դրույթները:

2. Սույն կանոնակարգի III բաժնի դրույթները գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ ըստ բարձրագույն ուսումնական հաստատությունների տվյալ տարվա պետական բյուջեով պետական կրթաթոշակների թիվը և չափը հաստատելու մասին համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելուց հետո:

II. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

3. Ուսանողական նպաստը փոխհատուցում է (լրիվ կամ մասնակի) ուսանողի ուսման վճարը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում նախատեսված միջոցների, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (այսուհետ՝ համալսարան), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:

4. Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրում է.

1) նույն կուրսում մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողներին՝ մրցութային կարգով.

2) օրենքով նախատեսված հետևյալ սոցիալական խմբերում ընդգրկված անձանց՝

ա. առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին և նրանց թվին պատկանող անձանց՝ համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի,

բ. 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց՝ համաձայն «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի,

գ. զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին՝ համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի,

դ. պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներին՝ համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի,

ե. պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին,

զ. պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդներին հատկացված անվճար տեղերի հաշվին ընդունված ուսանողներին՝ որպես նպատակային ընդունելությամբ ընդունվածներ:

5. Համալսարանը տվյալ ուսումնական տարում անվճար ուսուցման համակարգ ընդունված ուսանողների թվի տասը տոկոսի չափով՝ իր միջոցների հաշվին՝ ըստ առաջադիմության, փոխհատուցում է վճարովի ուսուցման համակարգի ուսանողների ուսման վարձը՝ ըստ Հայաստանի Հանրապետության կրթության պետական կառավարման լիազոր մարմնի հաստատած մասնագիտություններին հատկացված տեղերի քանակի: Նշված տեղերը ենթակա են փոխատեղման՝ համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. հուլիսի 27-ի N 1183-Ն որոշմամբ հաստատված կարգի և սույն կանոնակարգի պահանջների:

6. Սույն կանոնակարգի 4–րդ կետի 2)-րդ ենթակետի բ. և դ. պարբերություններում նշված անձանց նպաստները համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում ձևակերպվում են և տրամադրվում առաջին կուրսի սկզբում և պարտադիր վերանայվում յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում: Այդ անձինք զրկվում են նպաստ ստանալու իրավունքից, եթե բժշկասոցիալական վերափորձաքննության արդյունքներով չեն ճանաչվում հաշմանդամ:

7. Հայաստանի Հանրապետության կառավարությունը յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով բարձրագույն ուսումնական հաստատությունների համար նախատեսված միջոցների

սահմաններում, ըստ բուհերի և մասնագիտությունների (ներքին մրցույթով՝ ըստ մասնագիտացումների), բաշխում է պետության կողմից տրվող ուսանողական նպաստների քանակը, որը տեղափոխվում է կուրսից կուրս:

Առաջին կուրսում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցում տրամադրվում է Հայաստանի Հանրապետության պետական բուհերի ընդունելության կանոններով սահմանված կարգով բուհ ընդունված ուսանողներին: Հաջորդ կուրսերում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրվում է նույն կուրսում մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն (միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հարյուրերորդականի ճշտությամբ) ունեցող ուսանողներին՝ մրցութային հիմունքներով:

Ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքում միևնույն պայմանների դեպքում հավասար միավորներ ունեցող երկու և ավելի ուսանողների պարագայում՝ երկրորդ կուրսում առավելությունը տրվում է առաջին կուրսի վերջին կիսամյակի քննաշրջանի արդյունքում առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, հաջորդ կուրսերում՝ նախորդ ուսումնական տարվա, իսկ վերջինիս հավասարության դեպքում՝ դրան նախորդող ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին:

Մագիստրոսական կրթությունը բակալավրական կրթությանը հաջորդող շարունակական կրթություն է, և մագիստրատուրայում սույն կանոնակարգի դրույթների կիրառման ժամանակ հիմք են ընդունվում բակալավրիատի վերջին տարվա առաջադիմության ցուցանիշները, իսկ դրանց հավասարության դեպքում՝ նախորդող տարիների առաջադիմության արդյունքները:

Եթե վերոնշյալ կարգով համեմատության դեպքում ևս ուսանողների առաջադիմության միջին ցուցանիշները հավասար են, ապա առավելությունը տրվում է ընդհանուր մասնագիտական և մասնագիտացման դասընթացների քննություններից առավել բարձր ընդհանուր միջին միավոր ունեցող ուսանողին: Նշված ցուցանիշի հավասարության դեպքում հաշվի են առնվում.

1) բակալավրիատի ուսանողների համար՝ նշված դասընթացներից յուրաքանչյուրից ստացված միջին միավորները՝ ըստ վերոնշյալ հերթականության.

2) մագիստրատուրայի ուսանողների համար՝ մասնագիտացման առարկաներից ստացված միջին միավորները:

8. Մրցույթի առաջին փուլին չեն կարող մասնակցել այն ուսանողները, ովքեր ուսումնական տարվա քննաշրջանից հետո (առանց վերահանձնումների) ունեն վերջնական հաշվարկված անբավարար գնահատական («U»՝ ստուգարքի և «D»՝ քննության համար):

9. Ըստ մասնագիտությունների պետության կողմից հատկացված նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը միայն քննաշրջանի արդյունքով չլրացվելու դեպքում անցկացվում է մրցույթի երկրորդ փուլ, որին

առաջին հերթին մասնակցում են առաջին վերահանձնման արդյունքում դրական առաջադիմություն ապահոված ուսանողները, իսկ այնուհետև՝ երկրորդ վերահանձնման արդյունքում դրական առաջադիմություն ապահոված ուսանողները:

10. Սույն կանոնակարգի 4-րդ կետի 1)-ին ենթակետում նշված անձանց ուսանողական նպաստներ հատկացնելու գործընթացն իրականացվում է յուրաքանչյուր տարվա օգոստոսի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ը ընկած ժամանակահատվածում:

11. Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրում է յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված ուսանողի միջին որակական գնահատականի նվազագույն շեմը հաղթահարած և ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող հետևյալ խմբերին.

1) մինչև 5 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 50 տոկոսի չափով.

2) 5-10 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 60 տոկոսի չափով.

3) 10-15 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 70 տոկոսի չափով.

4) 15-20 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 80 տոկոսի չափով.

5) 20-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 100 տոկոսի չափով:

12. Ուսանողի միջին որակական գնահատականի (ՄՈԳ) նվազագույն շեմը յուրաքանչյուր տարի սահմանում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը:

13. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում ստանալու նպատակով ուսանողն իր ընտանիքի անապահովության միավորի վերաբերյալ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնից տեղեկանքը յուրաքանչյուր տարի ներկայացնում է համապատասխան դեկանատ մինչև տվյալ տարվա սեպտեմբերի 10-ը: Դեկանատները մեկ շաբաթվա ընթացքում նպաստառու ուսանողների ցուցակները (անապահովության միավորով, միջին որակական գնահատականով (ՄՈԳ) (հարյուրերորդականի ճշտությամբ), ուսման վարձի չափով) ներկայացնում են համալսարանի մանդատային հանձնաժողով: Համալսարանը ամփոփ տվյալները, ըստ սահմանված ձևի, ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

14. Համալսարանը վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն տասը տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորողներին առանձին-առանձին, ուսանողի սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության արդյունքների հաշվառմամբ, իր միջոցների հաշվին իրականացնում է հետևյալ անձանց ուսման վարձի՝ ուսանողական նպաստի ձևով մասնակի փոխհատուցում համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում.

1) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության 0 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ 30 տոկոս.

2) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ 30 տոկոս.

3) 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին՝ 50 տոկոս.

4) երեք և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին՝ 30 տոկոս.

5) երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին՝ 30 տոկոս.

6) ՀՀ սահմանամերձ շրջաններում բնակվող համալսարանի ուսանողներին՝ 30 տոկոս (ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 12-ի N 184 - Ն որոշման հավելվածի համաձայն, կցվում է «ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444 - Ն որոշման N 1 հավելվածը՝ ՀՀ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ցանկը»).

7) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներին՝ 30 տոկոս.

8) մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ 50 տոկոս.

9) ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված, ուսումնառության ընթացքում ուսումնական կիսամյակների առնվազն կեսն անընդմեջ (ներառյալ վերջին կիսամյակը) միայն A+, A, A- գնահատականներ ունեցող ուսանողներին՝ բակալավրիատում՝ 50 տոկոս, մագիստրատուրայում՝ 30 տոկոս.

10) համալսարանում որպես հիմնական 5 և ավելի տարվա անընդմեջ աշխատանքային ստաժ ունեցող աշխատողի երեխա ուսանողներին՝ 30 տոկոս.

11) առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին մինչև 23 տարին լրանալը, ովքեր ընդգրկված չեն սույն կանոնակարգի 4-րդ կետի 2)-րդ ենթակետի ա. պարբերությունում նախատեսված սոցիալական խմբում՝ 70 տոկոս.

12) մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին, ում զինվորական գրքույկի 7-րդ բաժնի «Հատուկ նշումներ» մասում առկա է ՀՀ պաշտպանության նախարարի 2014

թվականի հոկտեմբերի 17-ի N 1230 հրամանի պահանջներին համապատասխան գրառում՝ հաստատված զորամասի հրամանատարի ստորագրությամբ և զորամասի զինանշանային կնիքով՝ 30 տոկոս.

13) ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում 70 տոկոսի չափով տրամադրվում է ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված երկու կիսամյակ անընդմեջ առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, որոնք ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման համար անցկացված փոխատեղման մրցույթի արդյունքում զրկվել են նպաստի իրավունքից մինչև 0.1 միավոր տարբերությամբ.

15. Համալսարանում ուսման վճարի մասնակի փոխհատուցման մասին դիմումներն ընդունվում են տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքների սկզբին նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում: Դիմումների քննարկումը կազմակերպում է համալսարանի մանդատային հանձնաժողովը:

16. Համալսարանը, ըստ ուսանողների առաջադիմության, վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի տասը տոկոսը գերազանցող ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցվող գումարներից հաշվարկում և ՀՀ պետական բյուջե փոխանցում է եկամտային հարկ՝ համաձայն «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի:

17. Սույն կանոնակարգի 14-րդ կետում նշված նպաստառու ուսանողի սոցիալական վիճակի փոփոխության դեպքում համալսարանի մանդատային հանձնաժողովն իրավասու է փոփոխել հատկացվող նպաստը՝ այդ մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր կերպով ծանուցելով ուսանողին: Եթե ուսանողն իր կարգավիճակով համապատասխանում է սույն կանոնակարգի 11-րդ և 14-րդ կետերով սահմանված մի քանի ենթակետերի, նա կարող է հավակնել դրանցից միայն մեկին:

18. Առաջին կուրսի ուսանողներին ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրվում է ուսումնառության երկրորդ կիսամյակից սկսած:

Ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրվում է նախորդ կիսամյակի առաջադիմության (միջին որակական գնահատականի (ՄՈԳ) (հարյուրերորդականի ճշտությամբ) հիման վրա: Ուսման վճարի մասնակի փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողը կորցնում է արտոնությունը.

1) եթե տվյալ կիսամյակի (տարվա) ուսման վճարը կիսամյակի (տարվա) առաջին ամսվա ընթացքում չի մուծել.

2) եթե նախորդ կիսամյակում (քննաշրջանում՝ առանց վերահանձնումների) ունեցել է ակադեմիական պարտք:

19. Վերականգնված (կամ տեղափոխված) ուսանողներն ուսման վճարի մասնակի փոխհատուցման համար կարող են դիմել առնվազն մեկ կիսամյակ սովորելուց հետո:

20. Սույն կանոնակարգի համաձայն, նպաստի հավակնող ուսանողների ցուցակները ֆակուլտետի դեկանը ներկայացնում է համալսարանի մանդատային հանձնաժողովի քննարկմանը: Մանդատային հանձնաժողովը իրականացնում է մրցույթ և կազմում է նպաստառու ուսանողների ցուցակը (2 օրինակից), որը պարտադիր վավերացվում է մանդատային հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

21. Սույն կանոնակարգի 20-րդ կետում նշված ցուցակը կազմելու համար կազմվում է արձանագրություն: Արձանագրությունը ստորագրում են մանդատային հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

22. Համալսարանի մանդատային հանձնաժողովի հաստատած ցուցակները քննարկվում են ռեկտորատի նիստում և հաստատվելուց հետո հրամանագրվում համալսարանի ռեկտորի կողմից: Հրամանագրված ցուցակները հասցվում են ուսանողներին ի գիտություն՝ հրապարակման ճանապարհով (փակցվում են յուրաքանչյուր ֆակուլտետի հրամանների և հայտարարությունների ցուցատախտակում և հրապարակվում համալսարանի ինտերնետային կայքում): Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցման հրամանում պարտադիր նշվում է նպաստի տրման ժամկետը տվյալ տարվա սեպտեմբերի 1-ից մինչև հաջորդ տարվա օգոստոսի 31-ը: Համալսարանի կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցման հրամանում պարտադիր նշվում է մասնակի փոխհատուցման չափը: Ցուցակների վերաբերյալ բողոք-դիմումները կարող են ներկայացվել համալսարանի մանդատային հանձնաժողովին ցուցակների հրապարակումից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

23. Սույն կանոնակարգի 20-րդ կետում նշված ցուցակներում անճշտություններ, վրիպակներ, սխալներ, ինչպես նաև սույն կանոնակարգի դրույթների խախտումներ հայտնաբերելիս համալսարանի մանդատային հանձնաժողովը իրավասու է տվյալ մասնագիտության նպաստառուների ցուցակը հետ վերադարձնել՝ նոր մրցույթ կազմակերպելու համար: Անճշտություններ, վրիպումներ, սխալներ և կանոնակարգային խախտումներ թույլ տված անձինք ենթակա են կարգապահական պատասխանատվության:

24. Հարգելի պատճառով ուսումնառությունն ընդհատած (ժամկետային զինծառայության զորակոչվելու, առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու, հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի, կամ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների հետ կնքված միջպետական պայմանագրերի հիման վրա օտարերկրյա պետություններում ուսումնառությունը շարունակելու դեպքերում) ուսանողը վերականգնվելիս պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը (Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ուսանողական նպաստ ստացողների ընդհանուր

թվաքանակի շրջանակներում): Այս հանգամանքը պարտադիր նշվում է ուսումնառության ընդհատման մասին հրամանում:

25. Ուսանողական նպաստներ տալու գործընթացի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:

III. ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

26. Պետական կրթաթոշակը պետական ֆինանսական խրախուսանք է: Ուսանողներին պետական կրթաթոշակ է տրվում գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսևորելու համար:

Ուսանողների հասարակական ակտիվությունը բնութագրող ցուցանիշներն են.

1) մասնակցությունը ֆակուլտետի և համալսարանի ուսանողական հասարակական աշխատանքներին.

2) զեկուցումներ, ռեֆերատներ, հրատարակված աշխատանքներ (գիտական ամսագրերում և զանգվածային լրատվության միջոցներում).

3) մասնակցությունը միջբուհական, քաղաքային, հանրապետական և միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին, ուսանողական շինարարական ջոկատների աշխատանքներին.

4) ֆակուլտետի կամ համալսարանի ղեկավարության հանձնարարականների բարեխղճորեն և ժամանակին կատարում, որոնք ունեն համապատասխան ձևակերպումներ.

5) այլ հասարակական և ստեղծագործական ձեռնարկումներ՝ համալսարանի նախաձեռնությամբ:

27. Ուսանողների պատշաճ վարքագիծը դրսևորվում է նրանց կողմից համալսարանի ներքին կարգապահական կանոնների պահպանմամբ: Նշված կանոնների խախտման դեպքում ուսանողի նկատմամբ կիրառված կարգապահական տույժը կարող է հիմք ծառայել պետական և անվանական կրթաթոշակից զրկելու համար:

28. Համալսարանի պետական կրթաթոշակների թիվը և չափը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը յուրաքանչյուր տարի, Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով համալսարանին հատկացված միջոցների սահմաններում:

29. Համալսարանում պետական կրթաթոշակների հատկացման և ձևակերպման գործընթացը կազմակերպում է համալսարանի մանդատային հանձնաժողովը:

30. Ուսանողներին պետական կրթաթոշակի տրամադրումը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին, մրցութային կարգով, սույն կանոնակարգի 27-րդ կետով նախատեսված պայմանների համաձայն:

Նախատեսված պայմանները չապահովելու դեպքում ուսանողը զրկվում է պետական կրթաթոշակից:

31. Պետական կրթաթոշակից զրկված ուսանողը կարող է ընդգրկվել ուսումնական նպաստառուների համակարգում՝ սույն կանոնակարգի 4-րդ, կամ 11-րդ, կամ 14-րդ կետի պահանջները բավարարելու դեպքում:

32. Ազատված պետական կրթաթոշակները մրցութային կարգով հատկացվում են տվյալ մասնագիտության նույն կուրսի այլ ուսանողների:

33. Հարգելի պատճառով ուսումնառությունն ընդհատած (ժամկետային պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու, առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու, հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի, կամ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների հետ կնքված միջպետական պայմանագրերի հիման վրա օտարերկրյա պետություններում ուսումնառությունը շարունակելու դեպքերում) ուսանողը վերականգնվելիս պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը (Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ուսանողական նպաստ ստացողների ընդհանուր թվաքանակի շրջանակներում): Այս հանգամանքը պարտադիր նշվում է ուսումնառության ընդհատումը ձևակերպող հրամանում:

34. Առանց ծնողական խնամքի մնացած սովորող երեխաներին համալսարանը վճարում է կրթաթոշակ՝ սահմանված կրթաթոշակի 150 տոկոսի չափով, պետական բյուջեի միջոցների հաշվին, համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի:

35. Համալսարանը 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող առկա ուսուցման ուսանողներին հերթական քննությունները և ստուգարքները դրական գնահատականներով հանձնելու դեպքում վճարում է կրթաթոշակ՝ անկախ ստացվող նպաստից կամ թոշակից՝ համաձայն «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի:

36. Համալսարանն իրավասու է սեփական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին սահմանել անվանական կրթաթոշակներ: Անվանական կրթաթոշակի չափը հաստատվում է համալսարանի ռեկտորի կողմից՝ համալսարանի ռեկտորատի առաջարկությամբ:

37. Համալսարանում բակալավրիատի առկա ուսուցման ուսանողների համար սահմանվում են հետևյալ անվանական կրթաթոշակները.

1) ըստ ֆակուլտետների՝

ա. կառավարման ֆակուլտետ՝ Զ. Բաշինջաղյանի անվան,

բ. ֆինանսական ֆակուլտետ՝ Հ. Թումանյանի անվան,

գ. տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետ՝ Մ. Քոթանյանի անվան,

դ. մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ՝ Վ. Ներկարարյանի անվան,

ե. ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ՝ Ա. Արզումանյանի անվան,

զ. հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ՝ Կ. Կարագյանի անվան.

2) համահամալսարանական՝ ուսանողական խորհրդի կողմից տրամադրվող:

38. Անվանական կրթաթոշակները տրվում են մրցութային կարգով և վերանայվում յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո:

39. Անվանական կրթաթոշակի կարող են հավակնել բակալավրիատի 3-րդ և 4-րդ կուրսի չորս կիսամյակ անընդմեջ միայն A+, A և A- գնահատականներով սովորող, ուսանողական գիտական ընկերության աշխատանքների մասնակից, համալսարանում կազմակերպվող միջոցառումների ակտիվ մասնակից և պատշաճ վարքագիծ դրսևորող ուսանողները:

40. Յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո համալսարանի բոլոր մասնագիտությունների և մասնագիտացումների ուսանողներից խնամարկուները (կուրսղեկները) և ֆակուլտետի ուսանողական խորհրդի ներկայացուցիչը ընտրում են յուրաքանչյուրը մեկ թեկնածու և ներկայացնում թողարկող ամբիոն՝ ամբիոնի նիստում քննարկելու համար:

41. Ներկայացված թեկնածուների՝

1) ուսման առաջադիմությունը գնահատվում է 8-10 միավորներով՝

ա. 8 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հնարավոր առավելագույն արժեքի 80%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 85%-ը,

բ. 9 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հնարավոր առավելագույն արժեքի 85%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 90%-ը,

գ. 10 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով մեկ ուսումնական տարվա արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հնարավոր առավելագույն արժեքի 90%-ը, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 100%-ը.

2) գիտական աշխատանքներ կատարելու ունակությունը գնահատվում է 5-7 միավորներով՝

ա. 5 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր մասնակցել են ըստ ներկայացված ոլորտների՝ ներհամալսարանական գիտաժողովների,

սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) և ունեն պատվոգրեր, գովասանագրեր, դիպլոմներ,

բ. 6 միավորի կարող են հավակնել այն ուսանողները, ովքեր մասնակցել են ներկայացված ոլորտների՝ հանրապետական գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) և ունեն առնվազն երկու հրատարակված աշխատանքներ հանրապետական գիտական ամսագրերում,

գ. 7 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր մասնակցել են ներկայացված ոլորտների՝ միջազգային գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) և ունեն առնվազն երկու հրատարակված աշխատանքներ միջազգային գիտական ամսագրերում.

3) հասարակական ակտիվությունը գնահատվում է 3-5 միավորներով՝

ա. 3 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր ունեն ներֆակուլտետային հասարակական ակտիվություն,

բ. 4 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր անդամակցում են ներֆակուլտետային ուսանողական կառույցներին և ակտիվորեն ներգրավված են դրանց աշխատանքներում,

գ. 5 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր անդամակցում են համալսարանական ուսանողական կառույցներին և ակտիվորեն ներգրավված են դրանց աշխատանքներում:

42. Հիմք ընդունելով թեկնածուների գումարային միավորները՝ թողարկող ամբիոնը իր նիստում քննարկում է հարցը և մեկ թեկնածուի, դրական երաշխավորմամբ, ներկայացնում ֆակուլտետի խորհրդին:

43. Ֆակուլտետի խորհուրդը նույն կարգով քննարկում է թեկնածուների հարցը և լավագույնին, դրական երաշխավորմամբ, ներկայացնում համալսարանի մանդատային հանձնաժողով՝ ըստ ֆակուլտետների անվանական կրթաթոշակ տրամադրելու համար, իսկ մնացած թեկնածուներին ուսանողական խորհրդի դրական երաշխավորության առկայության դեպքում ներկայացնում է մանդատային հանձնաժողով՝ ուսանողական խորհրդի կողմից տրամադրվող անվանական կրթաթոշակի մրցույթին մասնակցելու նպատակով:

Մանդատային հանձնաժողովը կազմակերպում է մրցույթ ֆակուլտետներից ներկայացված թեկնածուների միջև և լավագույնին, դրական երաշխավորմամբ, ներկայացնում ռեկտորատ՝ ուսանողական խորհրդի կողմից անվանական կրթաթոշակ տրամադրելու:

44. Մանդատային հանձնաժողովը ֆակուլտետների անվանական կրթաթոշակի թեկնածուների դրական կարծիքով հարցը ներկայացնում է ռեկտորատի հաստատման:

45. Անվանական կրթաթոշակի վերաբերյալ ռեկտորատի որոշումը կենսագործվում է ռեկտորի հրամանով:

07.03.2019	«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2019 թվականի մարտի 7-ի որոշումը՝ «Գիտական խորհրդի 2016 թվականի հունիսի 22-ի նիստում (արձանագրություն N 9) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ուսանողական նպաստի, պետական և անվանական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում» փոփոխություններ կատարելու մասին»
04.07.2017	«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2017 թվականի հուլիսի 4-ի որոշումը՝ «Գիտական խորհրդի 2016 թվականի հունիսի 22-ի նիստում (արձանագրություն N 9) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ուսանողական նպաստի, պետական և անվանական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում» փոփոխություն կատարելու մասին»

* Ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 10-ի նիստում (արձանագրություն N 2) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ուսանողական նպաստի, պետական և անվանական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը»:

Հավելված
ՀՀ կառավարության 2021 թվականի
փետրվարի 12-ի N 184 - Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2014 թվականի
դեկտեմբերի 18-ի N 1444 - Ն որոշման

Ց Ա Ն Կ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ

Մարզը	Համայնքը	Բնակավայրը
ՀՀ Արարատի մարզ	Երասխ	գ. Երասխ
	Պարույր Սևակ	գ. Պարույր Սևակ
		գ. Տիգրանաշեն
ՀՀ Գեղարքունիքի մարզ	Ճամբարակ	ք. Ճամբարակ
		գ. Վահան
	Վարդենիս	գ. Ներքին Շորժա
		գ. Վերին Շորժա
	Գեղամասար	գ. Սոթք
		գ. Ազատ
		գ. Կութ
		գ. Նորաբակ
ՀՀ Վայոց ձորի մարզ	Արենի	գ. Արենի
		գ. Խաչիկ
	Զառիթափ	գ. Խնձորուտ
		գ. Սերս
		գ. Նոր Ազնաբերդ
		գ. Բարձրունի
ՀՀ Տավուշի մարզ	Նոյեմբերյան	ք. Նոյեմբերյան
		գ. Բաղանիս
		գ. Բարեկամավան
		գ. Բերդավան
		գ. Դովեղ
		գ. Կոթի
		գ. Ոսկեպար
		գ. Ոսկեվան
	Բերդ	գ. Այգեձոր
		գ. Այգեպար

		գ. Արծվաբերդ
		գ. Մովսես
		գ. Ներքին կարմիր աղբյուր
		գ. Չինարի
		գ. Չորաթան
		գ. Պառավաքար
		գ. Վերին կարմիր աղբյուր
	Ազատամուտ	գ. Ազատամուտ
	Այգեհովիտ	գ. Այգեհովիտ
		գ. Կայան
	Բերքաբեր	գ. Բերքաբեր
	Ծաղկավան (Իջևանի շրջան)	գ. Ծաղկավան
	Կիրանց	գ. Կիրանց
	Կողբ	գ. Կողբ
	Սարիգյուղ	գ. Սարիգյուղ
	Սևքար	գ. Սևքար
	Վազաշեն	գ. Վազաշեն
ՀՀ Սյունիքի մարզ	Կապան	գ. Ագարակ
		գ. Գեղանուշ
		գ. Գոմարան
		գ. Դավիթ Բեկ
		գ. Դիցմայրի
		գ. Եղվարդ
		գ. Խդրանց
		գ. Կաղնուտ
		գ. Ներքին Հանդ
		գ. Շիկահող
		գ. Սզնակ
		գ. Սյունիք
		գ. Սրաշեն
		գ. Ուժանիս
		գ. Ճակատեն
		գ. Ծավ
	Գորիս	գ. Աղբուլաղ
		գ. Հարթաշեն
		գ. Ձորակ
		գ. Ներքին խնձորեսկ
		գ. Շուռնուխ
		գ. Որոտան
		գ. Վանանդ
		գ. Բարձրավան

	Տեղ	գ. Տեղ
		գ. Արավուս
		գ. Խնածախ
		գ. Խոզնավար
		գ. Կոռնիձոր
		գ. Վաղատուր
		գ. Քարաշեն
	Տաթև	գ. Խոտ
	Մեղրի	գ. Նոնաձոր
Ընդամենը	23 համայնք	77 բնակավայր »: